Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 13 բարեգործական ծրագիր:

Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Երևան քաղաքի «Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ծննդատան համար օդորակիչների ձեռքբերում և անհատույց տեղադրում», «Հայաստանի Հանարապետության Տավուշի մարզի Կիրանց համայնքի գազաֆիկացման աշխատանքների նախագծում», «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բավրա գյուղի համայնքային կենտրոնի կառուցում», «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Լորդ Բայրոնի անվան թիվ 20 դպրոց ՊՈԱԿ-ի ջեռուցման համակարգի նախագծում» և «Լեռնային Ղարաբաղի Հանարապետության Շուշի քաղաքի Խաչատուր Աբովյանի անվան հիմնական դպրոցի վերջնական կահավորում» ծրագրերը.

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Լոռու մարզի Բլագոդարնոյե, Հոբարձի, Սվերդլով համայքների դպրոցների և ամրակից համայնքի մանկապարտեզի մետաղապլաստե դռների, պատուհանների մատակարարում», «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Արփունք համայնքի մշակույթի տան վերանորոգում», «Մետաղապլաստե պատուհանների մատակարարում և տեղադրում», «Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի թիվ 149 և 151 նախադպրոցական ուսումնական հաստատությունների (ՆՈՒՀ) սանհանգույցների վերանորոգում», «Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի թիվ 160 մանկապարտեզի ցանկապատի վերանորոգում», «Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի բակերում խաղային տարածքների վերանորոգում», «Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում խաղահրապարակների տեղադրում» և «Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի թիվ 159 և 160 մանկապարտեզների գույքի ձեռքբերում» ծրագրերը.

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Օշական գյուղի երաժշտական դպրոցի շենքի վերանորոգում» ծրագիրը:

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: